

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ

Դ .

Ս'ԵԾԴԻ առաքինութիւն Վառդգէնի :

ՅԵՏ առուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Վառդգինի ընդարձակեալ նախախնամութեամբն Վրիստոսի՝ և ելեալ փրծեալ 'ի բանտէն եմուտ յաշխարհ իւր : Եւ իբրեւ ազդեղ և Վերենիկն՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ , և դառնայր փախստեայ . և դարձեալ ուժեղացեալ դարձաւ ընդդէմ Վառդգինի . և երիվարին ընդ վազս փռնգալ՝ էր խրոխտանացն փրծուցեալ զնա 'ի ցաւոցն՝ քանզի այն ինչ կազդուրեալ էր Վառդգէնի 'ի հիւանդութենէ , և 'ի կրից աշխատութեանցն և 'ի տառապանաց բանտին , և հասեալ կալան զնա և տարան ետուն 'ի բանտ

երկաթից 'ի քաղաքն Հադամակերտ : Եւ ծառայ մի Վերենիկն որ բանտապանն էր լուծեալ զնա 'ի կապանացն՝ և տարեալ մուծանէ 'ի սենեակն ուր ննջէր Վերենիկն . և ծառայն զարիս խորհեալ սպանանել զՎերենիկն և զաշխարհս նուաճել յիշխանութիւն Վառդգինի , զի և զիպող էր ժամն : Բայց Վառդգէն ընտրեաց զսէրն Վրիստոսի քան զսէր փոքրամեայ աշխարհիս , ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա 'ի պապոյն նորա . ձայն բարձեալ արտասուելոց առ Վերենիկն , և զսուսեր մերկ 'ի ձեռքն սնելով , և վաղը և սակը մի , ասէ . “ Որդեակ իմ ” Վերենիկ , ողջոյն քեզ . ես ելի գնա ” ցի յաշխարհն : “ Եւնաց ” : Եւ նորա առ ահն պակուցեալ ասէ . “ Հայր իմ , խնայեալ յիս ” . և այլ ոչ զօրեաց բարբառել ինչ : Եւ Վառդգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն , մինչև յաջողեսցի ըստ կամաց Վրիստոսի յով և երթիցէ :

ԹՈՄԱ ԱՄԾՐՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բանս հարաքի Վաղղիացոյ 'ի Լողուլ անդ զնորն Վառդգէն , որ պանդխտէր երէայն ժամանակս յեւ պարբերալձայն Լիգղիացոյ ընդ Լիւրիկացիս :

ՎՍՏԵԱԼ յափունքս բացական տարադէպ
Հէգ զօրական ըզհայրենին յուզեմ վէպ ,
Երբեալ ապախտ չարաբաստիկ 'ի յեզր աստ
Յարտօսր աղի թանալ թանամ զիմնս բաղդ :
Եյս վեցերեակ ամբ են հիգիս և թշուառ
Որ պանդրխտիմն անշուք յերկիրս այս օտար .
Օլացաւ բնութիւն ըզհայրենին քաղցր ըզսէր ,
Սոռայաւ բաղդ ըզտենչ մարդոյ աղէկեր :
Ս'ի զօրականդ յուսաբեկ , հա նաւ եհաս .
Տացեն երկինք և քեզ առուրս բարեբաստ :

Եհա նաւուս Վաղղիացիք են ուղղիւ ,
Երպաստաւոր կանգնին իմոցս աղիտից ,
Ի Լուինէոյ՝ 'ի հայրենի մըխել ծով .
Եպախտ թողից ըզբարաժայռս անվըրդով :

ԸՆՏ դառն է մահ, ճակատագիր խրատամբեր,
 ԸՆԼ հայրենեաց իսկ կորուստը չեն ինչ կըրտեր .
 Յաւէժ տաղնապէ են այս կորուստը աղեկէզ
 Բաղդ անհամբոյր, այսպէս ընդ խաղ առնու զմեզ :
 Ս'ի զօրականդ յուսաբեկ, հա՛ նաւ եհաս ,
 Տացեն երկինք և քեզ աւուրս բարեբաստ :

Ըրք Վաղղիոյ, ո՞ր այն հողմիկ քաղցրասիւզ
 Ս'արեաց ըզձեզ առ պանդըխտեալս այս եղուկ .
 Ս'ի համարիք օտար 'ի ձէնջ զայս զինուոր
 Եւ ես մարտեայ ընդ ձեր դրօշուգ ահաւոր :
 Հայրենիք, իմն հայրենիք, մի մոռանալ
 Բզցօղ արեան որ ըզդաշտ քօ թաթաւեալ :
 ԸՆԼ կոյր է բաղդ, մահ նիւթ է գամ քան ըզգամ
 Տապալէ զփառս և սարդենեաց մեր անգամ :
 Օ օրականդ մի յուսաբեկ, հա՛ նաւ եհաս .
 Տացեն երկինք և քեզ աւուրս բարեբաստ :

Ըրդ հայրենեաց լուր կազդուրէ զլքեալ սիրտ
 Օ արթնուն փափաք, զարթնու արտօսը 'ի խըլիրտ .
 Հէգ զօրական, այր և իմ իսկ արիւն
 Ընդ ճողոպրէր ըզհայրենիս քաղցրագոյն :
 Յետ վեցերեակ տարեկանաց պանդըխտի
 Տեսնից ուրեմն, տեսնից ես աստղ հայրենի :
 Ըրք Վաղղիոյ ազնիւք 'ի սիրտ վեհք 'ի գործ
 Տուք ինձ ուրեմն յոյս հայրենեաց և ըզփորձ :
 Օ օրականդ մի յուսաբեկ, հա՛ յոյս եհաս .
 Տացեն երկինք և քեզ աւուրս բարեբաստ :

Հէգ զօրական, հարկ է թողուլ զպարելսս այս
 Եւ զհովանիս թաւածածուկ անտառաց ,
 Հարկ է թողուլ, մեկնիլ աստի փութապէս
 Վաշտ կապուտակ պարզի յաչաց քոց 'ի տես :
 Փութա՞ ճեպեա՞, մի յայսմ հետէ տարագիր
 Ելցես երբէք ընդ հայրենեաց քոց երկիր :
 Ըմէն սըրտի նա է յաւէտ սփոփիչ,
 Ըզգո՞վք որ դառն այսրմ բաղդիս է նիւթիչ :
 Ս'ի զօրականդ յուսաբեկ, հա՛ յոյս եհաս .
 Տացեն երկինք և քեզ աւուրս բարեբաստ :

Ի մութ գիշեր փայլատակեն երկինք հեշտ
 Հողմն յաջողակ զառագաստին ընու զթևս . . .
 Ս'ուռացաւ ծով զամբոխ ալեացն հողմակոծ ,
 Ըստեղք պայծառ բարի ուղւոյ են քարոզ . . .
 Ժամ է հապա, մեկնիլ ինձ ժամ երջանիկ
 Հաւ գիշերոյն երգէ զհրաժեշտն ինձ քաղցրիկ :
 Օ ի գեղեցիկ աստղըս յուրտ լուսաւոր
 Օ՛ր անուշակ վառն հայրենեացն ուղևոր :

Ողջամբ կեցջիր , զօրական , օր քեզ եհաս .
Տացեն երկինք և այլ աւուրս բարեբաստ :

Դարեաւ մընա , ո՛ր Կուինէա , բարեաւ կայ
Սիրտ 'ի բերան թողում ըզքեզ անմոռաց .
Հարկ է մեկնիլ 'ի հայրենին իմ գաւառ
Խառնիմ 'ի ծով ըզգիշերայն անբարբառ :
Ո՛չ մոռացայց ըզձեզ ափունք վանատուր
Օ՛ձեզ , որ ծածկիքդ յաչաց իմոց անտըխուր :
Ի՛նչ է մարդոյ ըմպել երբեմն ըզբաժակ
Ո՛ր դառն և քաղցր 'ի նոյն բերէ 'ի ճաշակ :
Ողջամբ կեցջիր , զօրական , օր քեզ եհաս .
Տացեն երկինք և այլ աւուրս բարեբաստ :

Դարձայց ուրեմն , հէգ զօրականս , դարձ 'ի տուն
Ե՛տ լըցան աչք իմ յարտօսր և յարին :
Ս'իակ յուսովն հայրենեաց կամ կենդանի
Վ'իրսն 'ի ճակատ , լեզու 'ի քիմ ըսպառի :
Հայրենիք իմ , իմ հայրենիք յուշ քեզ յուշ
Եւ իմ համբոյր դրոշմեաց 'ի հող քո անոյշ :
Ե՛տ է ինձ այս , չըփափագիմ այլում ինչ
Ե՛ք իմ նուազեալ ըզխաղաղիկն առնուն նինջ :
Օ՛րականդ , ողջ 'ի հայրենիդ կեցջիր ծոց
Տացեն երկինք վարձըս վըշտացդ անցելոց :

ԱՆՏՈՆ ԲԱՄՊՈՒԲՃԵԼՆ

ՅԵԼԱԿԵՐՏԱՑ ՌԱԺ . ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Գ .

() Գոտակարութիւն , [Ժէք] :

() ԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ըսելով կ'իմա-
ցուի աղէկ յատկութիւն մը , որ աս կամ
ան նիւթը ունի . և աս աղէկ յատկու-
թիւնը մեր պիտոյքներէն մէկը կամ
մէկալը լեցընելն է : Ի՞նչէ ան առաջ
կու գայ՝ որ նոյն բանը յարգ այսինքն
սփէք կ'ունենայ . վասն զի օգտակար

բանին ո՛վ չի փափաքիր . և փափաքած
բաներնուս հասնելու համար հարկաւ
փոխարէն մը կ'ընենք որպէս զի ձեռք
ձգենք զանիկայ , և ահա աս փոխարէ-
նը նոյն օգտակար բանին ափէքն է :

() Գտակարութիւնը կրնայ ուղղակի
ըլլալ , կրնայ անուղղակի ըլլալ . ուղղակի՝
կ'ըսուի՝ թէ որ նիւթ մը կարենայ իր
օգտակարութեամբը անմիջապէս մեր
պիտոյքը լեցընել . զոր օրինակ նկանակ
մը անօթի մարդուն համար ուղղակի
օգտակարութիւն կ'ունենայ , ինչու որ
անով անմիջապէս իր պիտոյքը կրնայ լե-
ցընել . բայց թէ որ նոյն մարդը ձեռքը
նկանակ մը ունենայ , և ինքը ջրի կարօ-
տութիւն քաշէ , հայր կու տայ ու տե-

1 ԳՂ . Utilité.

2 ԳՂ . Valeur.

1 ԳՂ . Directe.